


ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՀՈՎՍԵՓ ՕՐԲԵԼՈՒ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

(Մենդյան ՏՕ-ամյակի առիթով)

ՀՍՍՀ ԳԱ ԲՊԻԱԿԻԳ-ԻՆՊԵՐԱՄ Ա. Տ. ՂԱՆԱԼԱՆՅԱՆ

I

Նիկողայոս Մառից հետո Հովսեփ Օրբելին երկրորդ խոշոր արևելագետ-
կովկասագետն էր Ռուսաստանում, որի գիտական գործունեության մեջ, տաս-
նամյակներ շարունակ, առաջնակարգ տեղ են գրավել հայագիտության հար-



ցերը: Մառի նման նրա անունը ևս ան-
խղելիորեն կապված է հայ ժողովրդի
հաղարամյակների հնություն ունեցող
նյութական ու հոգևոր մշակույթի առա-
վել աչքի ընկնող հուշարձանների հետ:
Այդ հուշարձանները շուրջ կես դար
գտնվել են Օրբելու գիտական հետա-
քրքրությունների կենտրոնում, հանդի-
սացել նրա նախասիրությունների ա-
ռարկան:

Հայագիտության հարցերով դրադվե-
լիս Օրբելին միշտ աչքի առաջ է ունե-
ցել իր ժողովրդի արդի գոյավիճակը,
վաղնջական դարերի նրա կյանքի ու
մշակույթի լուսաբանությունը ձգտել է
ծառայեցնել ժամանակակից կենսական
խնդիրներին: Տարիներ առաջ ՀՍՍՀ գի-
թյունների ակադեմիայի «Պատմա-բա-
նասիրական հանդես»-ին հասցեագրած
իր ողջունագրի մեջ նա այդ առթիվ
գրել է. «Ես երբեմն առիթ եմ ունենում
լսելու, թե անցյալով խորապես հե-

տաքրքրվելը հեռացնում է ժամանակակից կյանքից, գիտությունը կորցնում է
իր սյուժեությունը: Ինձ թվում է, որ այդօրինակ հարցադրումը արդարացի չէ,—
անցյալին կարելի է և անհրաժեշտ է մոտենալ ներկայի դիրքերից, իսկ այն
դիտողները, որին խորթ են մեր օրերի պահանջմունքները, ժամանակակից
կյանքն էլ պատրաստ է ընկալել անցյալ դարաշրջանների լույսի տակ: Բնորոշ
հանգամանք է այն, որ անցյալի նկատմամբ նկատմամբ հետաքրքրության
սրումը տեղի է ունենում ապագայի նկատմամբ ամենասեփական ձգտումների
ժամանակ: Ստեղծելով իր ապագան ու ներկան, ժողովուրդը ձգտում է դնահա-
տել իր անցած ճանապարհը, և բուն թափով դարգացող նրա ինքնագիտակ-

յությունը հատուկ հետաքրքրություն է խթանում նրա մեջ անցած դարաշրջանների նկատմամբ»¹:

Օրբելին իրավացիորեն գտնում է, որ «հայ ժողովրդին հատուկ լավատեսությունը, ինքնահաստատման նրա տառապալից ձգտումը չի կարելի ճիշտ բնութագրել, առանց լավ իմանալու նրա այդ աշխարհընկալման հնօրյա ակունքները, որոնցով նա, ընդհուպ մինչև վերջին տասնամյակները տոկունորեն պայքարել է անկատարի բնահավաստների դեմ, համառորեն կռել իր երջանկությունը, հավատը, որի նկատմամբ նրան ուղեկցել է իր կյանքի բոլոր դարաշրջաններում»:

Հայ մշակույթի հարցերի մասին Օրբելին գրել է մշտիկից ու անձամբ ըփվելով Հայաստանի և հայ ժողովրդի ամենալայն խավերի հետ: Նա տարիներ շարունակ շրջել է հայրենի բնաշխարհում, եղել ինչպես Արևելյան, այնպես էլ Արևմտյան Հայաստանի շատ գավառներում, քաղաքներում ու գյուղերում (Անի, Շիրակավան, Բագարան, Մրեն, Մարմաշեն, Աշտարակ, Փարպի, Անուրդ, Գառնի, Պտղնի, Դիլիջան, Խաչեն, Գանձասար, Վան, Մոկս, Հայկաբերդ, Աղթամար, Խոփրագ-Կալե, Բագավան, Հին-Բայազետ, էրզրում և այլն), մի առ մի հետազոտել տեղի բերդերը, վանքերը, խաչքարերը, վիմագրերը, պեղել է երկրի ընդերքում թաքնված, հնագիտական արժեք ներկայացնող գանձերը, ուսումնասիրել ժողովրդի բառ ու բանը, նիստ ու կացը, հիմնել ու գլխավորել է մշակութային մի շարք օջախներ, հայտնաբերել ու պատրաստել է բազմաթիվ խոստումնալից երիտասարդ հայագետներ:

Ահա թե ինչու խոսելով Օրբելիի հայագետի մասին, չի կարելի սահմանափակվել միայն նրա գիտական աշխատություններով: Անհրաժեշտ է անդրադառնալ հայագիտության ասպարեզում նրա ունեցած երկարամյա ողջ գործունեությանը, հաշվի առնել այդ գործունեության ինչպես գիտական, այնպես էլ ազգային-հասարակական նշանակությունը:

2

Տակավին ուսանողական տարիներին Օրբելին մասնակցում է իր ուսուցիչ Նիկողայոս Մառի կողմից Անիի ավերակներում կատարվող պեղումներին, ուր և նա ստանում է իր գիտական առաջին մկրտությունը: Շատ շանցած երիտասարդ գիտնականը նշանակվում է Անիի նորաստեղծ թանգարանի վարիչ, իսկ 1910 թ. էլ հրատարակում է իր հայագիտական աշխատությունների նրա-խայրիբը՝ նվիրված Անիի հնագիտական նյութերի գիտական նկարագրությանն ու մեկնաբանությանը:

Հաջորդ՝ 1911 թ. Օրբելին Նիկողայոս Մառի առաջարկությամբ գործուղվում է Արևմտյան Հայաստան՝ հնագիտական, բարբառագիտական և ազգագրական հետազոտությունների համար: Մոտ մեկ տարի մնալով Վանում և Մոկսում, Հովսեփ Օրբելին մեծ ուշադրությամբ ու խնամքով ընդօրինակում է այնտեղ եղած հայերեն վիմական արձանագրությունները, ուսումնասիրում Աղթամարի վանքի ճարտարապետական կառուցվածքն ու բարձրաքանդակները, հարուստ նյութեր գրի առնում Մոկաց բարբառի ու բանահյուսության վերաբերյալ:

¹ К. Н. Ю з б а ш и н. Академик Носиф Абрамович Орбели. Москва, 1964, էջ 119—120.

1916 թ. Օրբելին Ն. Մառի հետ պեղումներ է կատարում Վանի միջնաբերդում, որի արդյունքը լինում է ուրարտական թագավոր Սարգուր II-ի նշանա՝ ձոր սեպագիր արձանագրության հայտնաբերումը նրա կողմից:

Հետագա մի քանի տարիներին Օրբելին զբաղվում է Հայաստանի տարբեր վայրերից զանազան ժամանակներում իր հայտնաբերած 1000-ից ավելի հայերեն վիմական արձանագրությունները հրատարակության պատրաստելու գործով:

1918 թ. հիմնական աշխատանքի անցնելով Պետրոգրադի պետական էրմիտաժում, իսկ հետո էլ նույն քաղաքի Պետական համալսարանում և Արևելագիտության ինստիտուտում, անվանի գիտնականը շիգերով իր կապերը Հայաստանի հետ, շարունակում է զբաղվել հայագիտության հարցերով:

1929 թ. այցելելով Հայաստան, Օրբելին նախնական հետախուզումներ է կատարում Անբերդի ամրոցում, ուր հայտնաբերում է Անիի ջրատար սիստեմը հիշեցնող մետաղյա խողովակների հետքեր: Նույն թվականին նա ընտրվում է Հայաստանի հնությունների պահպանության կոմիտեի անդամ:

1933 թ. Օրբելին ընտրվում է Հայաստանի կուլտուրայի պատմության ինստիտուտի իսկական անդամ:

1936 թ. նա գլխավորում է էրմիտաժի և միութենական ակադեմիայի հայկական ֆիլիալի (Արմֆան) համատեղ մեծ արշավախումբը դեպի Անբերդ ու երկու և կես ամիս պեղումներ կատարում միջնադարյան Հայաստանի այդ նշանավոր ամրոցում:

1938 թ. Օրբելին ընտրվում է Արմֆանի նախագահության նախագահ: Շնորհիվ իր էռանդուն գործունեության, նա կարճ ժամանակում Արմֆանի շուրջը համախմբում է հանրապետության գիտական ուժերը, հատուկ ուշադրություն դարձնելով գիտության տարբեր բնագավառների և մասնավորապես հայագիտության համար նոր մասնագետների պատրաստման գործին:

Հ. Օրբելու հայագիտական գործունեության նշանակալից տարեթվերից է 1939 թ., երբ նա Հայաստանի կառավարության հանձնարարությամբ անձամբ կատարում, կազմակերպում ու գլխավորում է հայկական էպոսի 1000-ամյակի տոնակատարության հետ կապված մի շարք կարևոր գործեր:

Այդ թվականին Օրբելու խմբագրությամբ Երևանում լույս են տեսնում «Սասունցի Դավթի» համահավաք բնագրի հայերեն և ռուսերեն հոբելյանական հրատարակությունները: Նրա նախաձեռնությամբ միութենական գիտությունների ակադեմիայի հրատարակչությունը Լենինդրագում շքեղ հրատարակությամբ լույս է ընծայում «Սասունցի Դավթի» համահավաք բնագրի ռուսերեն թարգմանությունը: Օրբելու մտահղացմամբ ու գիտական ծրագրով նույն թվականին հայկական էպոսի դարաշրջանին նվիրված մեծ ցուցահանդեսներ են կազմակերպվում Երևանի պետական պատմական թանգարանում և էրմիտաժում: Հոբելյանական ամբողջ տարվա: Ընթացքում անվանի գիտնականը ինչպես Հայաստանում, այնպես էլ Միության այլ վայրերում կարողում է բազմաթիվ դասախոսություններ և տպագրում շուրջ երեք տասնյակ հոդվածներ «Սասունցի Դավթի» և նրա դարաշրջանի հայոց պատմության ու մշակույթի վերաբերյալ: Առանձնապես հիշարժան են էպոսի հոբելյանական հրատարակության հայերեն և ռուսերեն տարբերակների, մասնավորապես լենինգրադյան

հրատարակության համար գիտնականի գրած բովանդակալից ու ծավալուն տույժարանները:

Երկար տարիներ ապրելով ու աշխատելով Լենինգրադում, Օրբելին, ինչպես արդեն նշվեց վերևում, երբեք չի կտրվել Հայաստանից: Հայրենական պատերազմի ժանր օրերին անգամ, գտնվելով թշնամու շրջապատման օղակում, նա մտովին եղել է իր հայրենիքի հետ, ինչպես ինքն է դրել, տեսել է «ձյունափայլ, մանկուց հարազատ ու անմոռանալի Մասսի գագաթը, և նրա փեշերին փռված՝ կանաչի մեջ սուզվող Արարատյան դաշտավայրը, հազարամյակներ շարունակ առատորեն հայոց արյունով հագեցած այդ դաշտավայրը, և արևով ողողված, գեղեցիկ շենքերով բոլորված Երևանի փողոցները, և այդ փողոցներով վազվզող հայ մանուկների արևակեզ երեսները»:

1942 թ. Օրբելին էրմիտաժի մի քանի աշխատակիցների հետ էվակուացվում է Երևան, ուր նա, քայքայված առողջությունը վերականգնելուց հետո, Էռանդուն կերպով սկսում է նախապատրաստական աշխատանքներ տանել Արմֆանի հիմքի վրա Հայաստանում ինքնուրույն ակադեմիա ստեղծելու համար:

1943 թ. Երևանում հիմնվում է Հայաստանի գիտությունների ակադեմիան և Օրբելին ընտրվում է նրա առաջին պրեզիդենտ: Խանդավառված հայկական ազգային ակադեմիայի ստեղծման փաստով, գիտնականը ամբողջապես նվիրվում է իր նոր պարտականության կատարմանը: Նրա անմիջական ու գործոն մասնակցությամբ վերակառուցվում է Արմֆանի նախկին ինստիտուտները, ստեղծվում են գիտական մի շարք նոր հիմնարկներ, կազմվում է հայկական ակադեմիայի կանոնադրություն². Ի շարս այլ գիտությունների, վերջինիս մեջ առանձնակի ուշադրություն է հատկացվում հայագիտության զարգացմանը:

Մինչև 1947 թ. հաջողությամբ գլխավորելով ՀՍՍՀ գիտ. ակադեմիայի աշխատանքները, Օրբելին այնուհետև, վերադաս մարմինների որոշմամբ նորից վերադառնում է էրմիտաժ, շարունակելով պահպանել իր սերտ կապերը Հայաստանի և հայկական ակադեմիայի հասարակական գիտությունների բաժանմունքի ինստիտուտների ստեղծագործական կյանքի հետ:

1951 թ. Օրբելուն հանձնարվում է Գառնիի հնագիտական արշավախմբի գլխավոր խորհրդատուի պարտականությունը:

1955 թ., ընդառաջելով ակադեմիայի (Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գիտական խորհրդի խնդրանքին, նա իր համաձայնությունն է տալիս հեռակա կարգով աշխատակցելու ինստիտուտին և մինչև 1957 թ. վերջինիս համար պատրաստում է երկու աշխատություն: Դրանցից առաջինը, որ կրում է «Հայկական հերոսական էպոսը» խորագիրը, լույս է տեսնում Երևանում 1956 թ., ռուսերեն և հայերեն, երկրորդը՝ «Միջնադարյան Հայաստանի առակաները» խորագրով, լույս է տեսնում Լենինգրադում, նույն թվականին, ռուսերեն:

«Հայկական հերոսական էպոսը» աշխատության մեջ ի մի են բերված և վերամշակված ձևով ներկայացված են «Սասունցի Դավթի» համահավաք բնագրի Երևանի՝ հայերեն և ռուսերեն, և Լենինգրադի՝ ռուսերեն հրատարակու-

² Տե՛ս «Արշճ» ժողովածուն, կազմեց Ա. Արզումանյան, Երևան, 1956, էջ 143—147:

³ Տե՛ս «Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության ԳԱ կանոնադրությունը», Երևան, 1943, էջ 1—2:

թյունների համար հեղինակի գրած ընդարձակ առաջարկները, ինչպես նաև գրողների միության հոբելյանական պլենումում և միութենական ակադեմիայի հատուկ նիստում 1939 թ. հայկական էպոսի մասին նրա կարդացած երկու զեկուցումները:

Քննության առարկա աշխատության մեջ արծարծված են հայկական էպոսի պատմական միջուկի, նրա ձևավորման, սոցիալական ծագման, սյուժեի, կերպարների, լեզվի, ոճի ու այլ հարցեր:

Առանձնապես արժեքավոր են Օրբելու առաջ քաշած թեզերը հայկական էպոսի մեջ արտացոլում գտած կոսմիկական մոտիվների և ուրիշ ժողովուրդների առասպելական հնագույն պատկերացումների միջև եղած նմանությունների ու ընդհանրությունների մասին:

Գիտնականի դիրքորոշումը տվյալ հարցում այն է, որ կոսմիկական հնագույն կերպարներում չկա ոչ միայն ժողովրդական, այլև ցեղային տնօրեն, քանի որ դրանք ծագել են այն ժամանակ, երբ տակավին չէին ձևավորվել ոչ ժողովուրդները և ոչ էլ ցեղերը: Նա ելնում է այն ճիշտ մեկնակետից, ըստ որի «պրիմիտիվ մարդու մտածողության սահմանափակությունը, որտեղ էլ ապրելիս լիներ այդ մարդը և այս պատկերացումների սահմանափակությունը, որոնցից նա կարող էր օգտվել բնությունն ու նրա երևույթներն, արտահայտելու համար, բնականաբար հանգեցրել են նրա գիտակցության համար անմատչելի, ահարկու բնության երևույթների նույնանման գրավորմանը, նույնիսկ այն դիպրում, եթե այդ պատկերացումներն ստեղծվել են աշխարհագրորեն անանցանելի տարածություններով, ժամանակի տեսակետից բազմաթիվ դարերով, երբեմն նույնիսկ հաղարամյակներով իրարից հեռու մարզկանց մտածողության մեջ»⁴:

Օրբելին, առաջին անգամ հայ բանագիտության մեջ, հետաքրքիր համեմատություններ ու զուգադրություններ է կատարել հայկական Սանասարի ու Բաղդասարի, հունական Դիոսկուրոս, Կաստոր և Պոլիդեկոս եղբայրների, հնդկական Ալշինների և Իրանի Ասփինների, մեր Արմաղանի և Անդրոմեդեի, սասունցի պառավ Կնոջ, Դեմետրեի և զերմանական էրզայի, Դավթի, Աթիլեսի, Զիգֆրիդի և հայ ժողովրդի ազգային էպոսի մի քանի ուրիշ դիցաբանական ու վիպական կերպարների միջև:

Նշելով հիշյալ կերպարների ընդհանրությունները, նա միաժամանակ ընդգծում է յուրաքանչյուրի առանձնահատկությունը, բացահայտում այդ առանձնահատկությունների պատճառ տնտեսական և հասարակական հիմքերը: Այսպես.

Խոսելով Դեմետրեի, էրզայի և կորեկի արտի տեր սասունցի պառավի միջև գոյություն ունեցող տարբերությունների մասին, Օրբելին այդ տարբերությունները բացատրում է նրանով, որ երկրագործական Հունաստանը և անասնապահական Սասունը, որը միայն աննշան շահով էր կերակրվում պրիմիտիվ հացաբույսով՝ կորեկով, պետք է որ իրենց պանթեոնում էապես տարբեր տեղ տային բերքի հովանավոր աստվածուհուն: Նույն կերպ, միսնդամայն համոզիչ բացատրություն է տրվում նրա կողմից նաև Անթելի և Սանասարի առասպելական կերպարների միջև եղած տարբերությանը: Ջրով հարուստ, սակայն ցանքատարածություններով աղքատ Հելլադայում Անթելն իր ուժն, ըստ Օրբելու,

⁴ Հոգսի Օրբելի, Հայկական հերոսական էպոսը, Երևան, 1956, էջ 112:

ստանում է հողից, իսկ Հայաստանի պայմաններում, որտեղ ժողովրդի բարօրությունն ամբողջապես կախված է ոռոգումից, Սանտուարի զորության աղբյուրը ջուրն է⁵:

Նույն աշխատության մեջ առկա են ուրիշ կարևոր դրույթներ ու հետաքրքիր մտքեր ևս:

«Սասունցի Դավթի» որոշ պատումներում պահպանված մի շարք իդրոմատիկ արտահայտությունների, վերապրուկային մոտիվների խելամիտ բացատրության և համոզիչ մեկնարանումների միջոցով Օրբելին կարողանում է ետ տանել հին Հայաստանում գոյություն ունեցող վաղեմի սոցիալական կարգերի վրա իջած դարերի վարագույրը:

Խոսելով էպոսի մեջ մի շարք անգամներ հիշատակվող «Սասնա տուն», «Սասնա տան վերջին խոյ» (Փոքր Մհերի համուր) արտահայտությունների մասին, գիտնականը դրանք համարում է Հայաստանի լեռնային շրջանների տնտեսաձևի վերաբերյալ վեպի պահպանած թանկագին վկայություններից մեկը և այդ առթիվ առաջ է իր համոզիչ բացատրությունը: Հենվելով Թովմա Արծրունու մի վկայության վրա, որի համաձայն խաթեցի լեռնականների «տոհմական տները» գտնվել են իրարից բավական հեռու, Օրբելին «Սասնա տուն» արտահայտության տակ հասկանում է դեռ ֆեոդալական կյանքի հունը չմտած և կլանի տարրերը պահպանող սոցիալ-տնտեսական մի միավոր, իսկ «Սասնա տանի խոյ» արտահայտությունը համարում է տոհմի հովանավոր վաղնջական տոտեմի հիշողությունը: Մի ուրիշ առիթով, անդրադառնալով էպոսի կանացի կերպարներից Դեղձուն-Սամին և Իսմիլ-խաթունին, նա վերջիններիս մեջ նշմարում է մայրիշխանության արձագանքները, նկատի ունենալով առաջինի ամենից բարձր կանգնած տան տիրուհի, տան մեծ մայր, բայց ոչ երբեք թագուհի լինելու հանգամանքը, իսկ երկրորդի՝ ինքն իրեն համար կենակից ընտրելու փաստը: Գիտնականի կարծիքով նմանօրինակ արձագանքներ են էպոսի մեջ մեթեորային երկաթի օգտագործման պատմությունը, Քեռի Թորոսի ու նրա որդիների՝ նահապետական կարգերն ու տոհմական ընտանիքն արտացոլող նկարագրությունը և ուրիշ մի շարք դրվագներ⁶:

Օրբելու «Հայկական հերոսական էպոսը» աշխատության նշանակությունը չի սահմանափակվում վերը նշված պատ բանագիտական նոր հարցադրումներով: Պակաս կարևոր չէ նաև այդ աշխատության դերը «Սասունցի Դավթի» գիտական պրոպագանդայի գործում: Լինելով տվյալ թեմային նվիրված ուսերեն առաջին գիրքը մեզանում, գրված միջազգային ճանաչում ունեցող անվանի գիտնականի կողմից, Օրբելու աշխատությունը ժամանակին նշանակալից շափով նպաստեց «Սասունցի Դավթի» մասսայականացմանը Միության բազմազգ ժողովուրդների մեջ, իսկ ավելի ուշ, համառոտ տարբերակով թարգմանվելով հաև օտար լեզուներով (ֆրանսերեն, չինարեն և այլն) և իբրև առաջաբան օգտագործվելով վեպի հոբելյանական բնագրի հիշյալ լեզուներով կատարված թարգմանությունների համար, քիչ նշանակություն չունեցավ հայ ժողովրդի ազգային էպոս «Սասունցի Դավթի» գիտական պրոպագանդան ու մասսայականացման գործում:

⁵ Նույն տեղում, էջ 109:

⁶ Տե՛ս նույն տեղում:

Օրբելու հայադիտական մյուս աշխատությունը, որը «Հայկական հերոսական էպոսի» նման տնտրանալի արժեք ունի հայ մշակույթի առավել աչքի ընկնող հուշարձանները միջազգային ասպարեզ դուրս բերելու գործում, դա նրա վերը հիշատակված «Միջնադարյան Հայաստանի առակները» գիրքն է, որը նշանավոր առակագիրներ Մխիթար Գոշի, Վարդան Այգեկցու, մասամբ էլ Ոլոմպիանոսի շուրջ 150 լավագույն առակների ռուսերեն թարգմանությունն է՝ համապատասխան առաջաբանով, ներածությամբ ու ծանոթագրություններով:

Առակներով զրադվելու, դրանք ռուսերեն թարգմանությամբ և բանասիրական ապարատով ու մեկնաբանություններով դիտական և հասարակական լայն շրջաններին մատուցելու անհրաժեշտության գաղափարը Օրբելու մեջ սաղմնավորվել է տակավին ռուսանողական տարիներին, երբ նա առաջին անգամ առիթ ունեցավ ծանոթանալու Նիկողայոս Մառի՝ Վարդանյան առակներին նվիրված եռահատոր աշխատությանը: Այդ ժամանակներից է, ահա, որ առակները լրջորեն գրավում են Օրբելու ուշադրությունը և այնուհետև հետապնդելու չափ ուղեկցում նրան իր ողջ կյանքում: Եվ դա բնական ու հասկանալի է: Առակներն ընդհանրապես և հայկական առակները մասնավորաբար, սերելով ժողովրդական բանավեպից, դարավոր ակունքներից, յուրովի մարմնավորում ու խտացում են ժողովրդի իմաստությունը, զեղարկատական ու նրդիծական հանձառը, նրա՝ ազգային կյանքի անկրկնելի կոլորիտը: Առակների միջոցով ժողովուրդը խստագույնս նշավակել է հասարակական կյանքի շարիքները, քսրոզել բայության վեհ գաղափարներ: Նրանց մեջ հաճախ մի քանի նախադասությամբ, էրբեմն էլ մի երկու խոսքով կատարված են փիլիսոփայական ու փնդսրվեստական նշանակալից ընդհանրացումներ:

Շարունակելով ու զարգացնելով ժողովրդական առակների լավագույն ավանդները, Մխիթար Գոշն ու Վարդան Այգեկցին այդ ժանրը հասցրին միջնադարյան հայ բանաստեղծության, մանրանկարչության ու ճարտարապետության մակարդակին: Իրենց ստեղծած ու մշակած առակների միջոցով նրանք արտացոլեցին կյանքի ու աշխարհայացքի մեջ կատարված այն նկատելի տեղաշարժերը, որ բնորոշ են հայ իրականությանը տվյալ դարաշրջանում (աշխարհիկ ոգի, բնության գովք, ազատամիտ գաղափարներ, հոգևոր և աշխարհիկ տերերի վարք ու բարքի քննադատություն ու ծաղր, աշխատանքի ու աշխատավորի փառաբանություն, տգիտություն, ստորաքարշության, ամբարտավանության և մարդկային ուրիշ արատների խարազանում և այլն):

Սակայն միջնադարյան Հայաստանի առակների հասարակական և զեղարկվեստական վերահիշյալ արժանիքների ընկալումը և հայ մշակույթի պրոպագանդման համար դրանց ունեցած մեծ նշանակության գիտակցումը հարցի մի կողմն էին:

Առակների խորագնին ուսումնասիրության և բարձրորակ թարգմանության գործը պահանջում էր նաև գրաբարի և միջին հայերենի լավ իմացություն, բանասիրական հմտություն, արվեստագետի զգացողություն ու ճաշակ, ռուսաց ինչպես գրական, այնպես էլ կենդանի խոսակցական լեզվի անթերի տիրապետում: Օրբելին օժտված էր այդ բոլոր տվյալներով և, բացի այդ, ուներ բնատուր հակում դեպի սեղմ ու դիպուկ խոսքը, երգիծանքն ու սրամտությունը, որոնք առակների գլխավոր հատկանիշներն էին:

Վերոհիշյալ տվյալներով էլ ահա պայմանավորված են նրա «Միջնադարյան Հայաստանի առակները» գրքի հետևյալ անուրանալի արժանիքները.

ա) Մխիթար Գոշի և Վարդան Այգեկցու առակներից կատարված օրինակելի ընտրությունը և ընտրված նյութերի նույնպիսի խմբավորումը, որի շնորհիվ ընթերցողը հնարավորություն է ստանում տվյալ ժողովածուում ներկայացված նյութի համեմատաբար փոքր քանակի (շուրջ 150 առակ) միջոցով ամբողջական ու ճիշտ պատկերացում կազմելու մի քանի հարյուրի հասնող միջնադարյան հայ առակների ժանրային առանձնահատկությունների և թեմատիկ բազմազանության մասին:

բ) Առակների ըստ ամենայնի հաջող ու հարադատ թարգմանությունը, որի շնորհիվ այլազգի ընթերցողը ճիշտ պատկերացում կարող է կազմել ոչ միայն հայկական առակների բովանդակության, նրանց մեջ արժարժված մտքերի, այլև նրանց ինքնատիպ ոճի, արտահայտչական հնարների և ազգային ուրույն կոլորիտի մասին:

գ) Մանրակրկիտ ճշգրտությամբ և մեծ բարեխղճությամբ կազմված ծանոթագրությունները, որոնք նախատեսված լինելով ընթերցողների լայն շրջանների համար, կարևոր տեղեկություններ կարող են տալ նաև տվյալ բնագավառի նեղ մասնագետներին (գրականագետներին, բանասերներին ու պատմաբաններին):

դ) Սեղմ և միաժամանակ շատ բովանդակալից ներածությունը, որտեղ խտացված են միջնադարյան Հայաստանի առակների ուսումնասիրության ուղղությամբ գիտնականի կատարած բազմամյա ուսումնասիրությունների հիմնական ու կարևոր եզրակացությունները:

1955—1957 թթ., Հայաստանի ակադեմիայի Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հեռակա աշխատակից լինելու տարիներին, Օրբելին, ինստիտուտի համար բացի վերոհիշյալ երկու աշխատությունները հրատարակության պատրաստելուց, գործոն մասնակցություն է ունենում նաև ինստիտուտի ծրագրած հայ ժողովրդական հեքիաթների գիտական հրատարակության 10-հատորյակի նախապատրաստական աշխատանքներին, հանդես է գալիս իբրև այդ հրատարակության առաջին, երկրորդ և երրորդ հատորների ընդհանուր խմբագիր:

1958 թ. մինչև 1961 թ. ապրելով Լենինգրադում և պաշտոնավարելով տեղի պետական համալսարանում և Արևելագիտության ինստիտուտի Լենինգրադի բաժանմունքում, Օրբելին շարունակում է առաջ տանել նաև իր հայագիտական հետազոտությունները: Այդ տարիներին նա ուղադրությունը հիմնականում կենտրոնացնում է առաջներում սկսած և այս կամ այն պատճառով անավարտ թողած իր մի շարք ձեռագիր գործերը համալրելու, ամբողջացնելու և դրանք հրատարակության պատրաստելու ուղիստանքների վրա, երբ հանկարծահաս մահը 1961 թ. փետրվարի 2-ին վերջակետ դրեց նրա կյանքին:

Հաստատվոր հատորների սիրահար որոշ գիտնականների շրջանում, որոնք ընդունակ են տարին մի մեծ գիրք լույս աշխարհ բերելու, այն կարծիքը կա, թե Օրբելին քիչ բան է տպագրել: Եթե առաջնորդվելու լինենք հիշյալ գիտնա-

կանների չափանիշով, թերևս այդ կարծիքը ճիշտ է: Մեծանուն գիտնականի տպագրած աշխատությունների մամուլային ցուցանիշը իրոք այնքան էլ մեծ չէ: Հայտնի է, սակայն, որ իսկական գիտության համար կարևորը ոչ թե սամուլների քանակն ու գրքերի հաստությունն է, այլ այն թարմ նյութն ու նոր խոսքը, որ բերում է այս կամ այն գիտնականը գիտության տվյալ բնագավառում:

Այս առումով Օրբելու համեմատաբար փոքրաթիվ ու փոքրածավալ աշխատությունները ազատ կերպով կարող են ստվերի մեջ թողնել վերահիշյալ կարգի շատ ու շատ հաստափոր հատորներ:

Անվանի հայագետ Գալուստ Տեր-Մկրտչյանի նույնպես ոչ բազմաթիվ և նույնպես ոչ ծավալուն աշխատությունների նման՝ հայ մշակույթի հարցերին նվիրված Օրբելու գործերը այն անհրաժեշտ հիմնասալերից են, առանց որոնց չի կարող կառուցվել հայագիտության ապագա մեծ շենքը:

Իսկ եթե մենք հաշվի առնենք գիտա-կազմակերպչական, գիտա-պրոպագանդիստական և գիտա-մանկավարժական այն իրոք հսկայական գործը, որ կես դար շարունակ կատարել է Օրբելին հանուն հայագիտության զարգացման ու բարգավաճման, ապա շենք կարող շտեմնել և մանավանդ չզգալ, որ զբաղվածության ու ծանրաբեռնվածության նման պայմաններում նրա տպագրած հայագիտական աշխատությունների քանակը ևս փոքր չէ: Այն կազմում է շուրջ 30 անուն: Թվենք դրանցից առավել կարևորների վերնագրերը.

1. Асан Джалал, князь Хаченский (1909 թ.), 2. Развалины Ани (1911 թ.), 3. Армянское искусство (1911 թ.), 4. Надписи Мармашена (1914 թ.), 5. Бытовые рельефы на хаченских крестных камнях XII и XIII вв. (1915 թ.), 6. Багаванский храм и его надписи (1916 թ.), 7. Вопросы и решения Анания Ширакаци, армянского математика VII века (1918 թ.), 8. О первоначальной форме купола Ахтамарского храма (1921 թ.), 9. Армянский героический эпос (1956 թ.), 10. Басни средневековой Армении (1956 թ.), 11. Надписи городища Ани (1966 թ.).

Հովսեփ Օրբելու հայագիտական ծառանգությունը, սակայն, չի սահմանափակվում միայն տպագիր գործերով: Նա թողել է նաև կարևոր ձեռագիր աշխատություններ: Դրանք հետևյալներն են.

1. Анийские ртутные сосуды XI—XIII вв., 2. Архитектурные памятники и декоративная скульптура Ахтамара (X в.), 3. Материалы для изучения мокского диалекта армянского языка, 4. Перевод «Войны Вартанидов» Егише с древнеармянского языка на русский язык, 5. Перевод «Истории Армении» Лазара Парбеци с древнеармянского языка на русский язык, 6. Перевод «Истории Арцрунидов» Фомы Арцруни с древнеармянского языка на русский язык, 7. Синхронистические таблицы для перевода исторических дат армянской эры на европейский календарь, 8. Средневековые армянские басни⁷.

Համառոտակի կանգ առնենք հիշյալ աշխատություններից երկու առավել կարևոր ու ծավալուն գործերի վրա:

⁷ Տե՛ս Носиф Абгарович Орбели, материалы к библиографии ученых СССР, Ереван, 1957, էջ 35—59.

Դրանցից ժամանակով առաջինը Օրբելու «Մոկաց տեքստեր» ընդհանուր խորագիրը կրող աշխատությունն է⁸։ Վերջինս նվիրված է Արևմտյան Հայաստանի պատմական Մոկաց աշխարհի բազմաբանին, Այն բաղկացած է տարբեր ժանրի բանահյուսական հարուստ նյութերից (զրույցներ, առակներ, հեքիաթներ, վիպական, ծիսական և քնարական երգեր, առածներ, ասացվածքներ, հանելուկներ), որոնք անձամբ գրի է առել հեղինակը 1911 թ. Մոկսում աղգագրական և բարբառագիտական հետախուզումներ կատարելիս, Մոկաց բարբառի ընդարձակ բառարանից և հանդամանալից առաջաբանից։

Չնայած քննության առարկա աշխատության մեջ տեղ գտած բանահյուսական նյութերը գրի են առնված առանց ֆոնոգրաֆի, սակայն, շնորհիվ Օրբելու վարպետ գրառման և նրա կողմից կիրառված գիտական տառադարձման, դրանք բավական ճշգրիտ պատկերացում են տալիս տվյալ բարբառի հնչյունական առանձնահատկությունների, բառային կազմի և քերականական կառուցվածքի մասին։ Օրբելու գրի առած Մոկաց տեքստերը թերևս ամենահավաստի աղբյուրն են այդ բարբառի գիտական ուսումնասիրության համար, քանի որ մեր ձեռքի տակ եղած ինչպես տպագիր, այնպես էլ անտիպ նյութերը, գրի առնված լինելով զանազան սիրող-բանահավաքների կողմից, այդ առումով քիչ են վստահելի։

Սակայն «Մոկաց տեքստերի» նշանակությունը չի սահմանափակվում միայն բարբառագիտական շրջանակներով։ Այն որոշակի արժեք է ներկայացնում նաև բանագիտության համար, քանի որ պարունակում է մի շարք նոր ու հետաքրքիր բանահյուսական նյութեր և հին նյութերի նոր տարբերակներ, որոնք լրացնում են մեր ունեցած պատկերացումները Մոկսի հայերի բառ ու բանի վերաբերյալ։

Անհրաժեշտ է հատուկ ընդգծել Օրբելու մեծ ծառայությունը Մոկաց տեքստերի ուսերեն թարգմանության գործում։ Տիրապետելով թե՛ Մոկաց բարբառին և թե՛ ռուսերեն ժողովրդական լեզվին, թարգմանիչը կարողացել է գտնել հայերեն ժողովրդական արտահայտությունների, բառերի և իդիոմների համարժեքները ռուսերենում և տալ իսկական գիտական թարգմանություն, որը արտահայտում է բնագրի բոլոր առանձնահատկությունները։

Ինչպես պատմա-ազգագրական, այնպես էլ բանագիտական-բարբառագիտական ինքնուրույն արժեք ու նշանակություն ունի նաև «Մոկաց տեքստեր» աշխատության ծավալուն առաջաբանը։ Տեղում կատարված դիտարկումների ու հետախուզումների հիման վրա այստեղ տրված է Մոկաց գավառի աշխարհագրական և բնական առանձնահատկությունների, նրա բնակիչների, աշխատանքային կյանք ու կենցաղի, սոցիալ-տնտեսական և իրավա-քաղաքական հարաբերությունների, նիստ ու կացի, բանավոր ստեղծագործության և վերջինիս հեղինակների ու կատարողների ըստ ամենայնի ճշմարտացի քննադիրը։

Այնպիսի շեշտ համարում մեջ բերել հիշյալ առաջաբանի վերջին հատվածը, որը մեզ հիշեցնում է կատարված պատմական անցուդարձերին ականատես մեր միջնադարյան գրիչների ինքնաբուխ մտորումներն ու խոստովանությունները։

8 Տե՛ս Հ. Ա. Օրբելու արխիվը։

«Главная причина, по которой я был обязан говорить все время в прошедшем времени, заключается в том, что чудовищные события 1914—1916 гг., те кровавые зверства, которые разыгрались тогда в Западной Армении и те ужасающие эпидемии, которые охватили беженцев, спасавшихся из Турции в Россию,— последовательно истребили и разрушили жизнь в Моксе, как и в большей части Западной Армении.

Известно, что из всего армянского населения Мокса лишь несколько семей выжило и спаслось от резни турками мирного населения, от чудовищных трудностей и голода в пути, от заразных болезней, уносивших десятки тысяч жертв, до того как эти выжившие нашли себе приют, а с 29 ноября 1920 года и счастье в пределах Советской земли. Когда в 1916 г. я производил археологические раскопки на Ванской скале, до меня в Ван дошли сведения, что в отрезанном от Вана Моксе и курдское население не избежало судьбы армянского, что оно частью истреблено, частью бежало, и что во всяком случае, Мокс обезлюдел и от армян и от курдов.

А в 1911—1912 гг., когда я побывал в Моксе, там жило много людей, протекала трудовая, бесправная, тяжелая, но не вовсе лишенная маленьких радостей жизнь. И потому особенно грустно сознавать, что то немногое, что я успел записать в Моксе,— и этот небольшой сборник текстов, и армянский и курдский словари,— являются едва ли не последним свидетельством о языках, укладе жизни, обычаях, труде и радостях нескольких тысяч переплетшихся между собою в повседневной жизни сынов двух народов, армян и курдов, народов, исторические судьбы которых были переплетены между собою на протяжении двух с половиной тысяч лет»⁹.

Հովսեփ Օրբելու ձեռագիր ժողովրդական մեջ պահպանված երկրորդ կարևոր աշխատությունը կրում է «Հայկական միջնադարյան առակները» ընդհանուր խորագիրը և ունի շուրջ 25 հեղինակային մամուլ ծավալ¹⁰: Նիկողայոս Մանի «Ժողովածոյք առակաց Վարդանայ» եռահատոր դասական աշխատությունից հետո Օրբելու ուսումնասիրությունը երկրորդ կապիտալ գործն է միջնադարյան Հայաստանի առակների մասին: Ունենալով միևնույն թեման, հիշյալ երկու աշխատությունները տարբերվում են իրարից իրենց բնույթով, առաջ քաշած գիտական հարցերով և յուրովի լրացնում են իրար:

Մասի նպատակն է եղել պարզել XIII դարի հայ նշանավոր քարոզիչ ու գրող Վարդան Այգեկցու անունը կրող առակների տարբեր խմբերի ու խմբագրությունների, դրանց տեղական ու եկամուտ շերտերի, արարական «Աղվես-բազրբի» հետ ունեցած կապի խնդիրները և բազմաթիվ ուրիշ բանասիրական, աղբյուրագիտական և տեքստաբանական կարևոր հարցեր, որը նա կատարել է փայլուն հաջողությամբ:

Օրբելին իր առաջ խնդիր է դրել նույն Վարդան Այգեկցու և Մխիթար Գոշի առակների միջոցով բացահայտել XII—XIII դարերի Հայաստանի տնտեսական, հասարակական, իրավական, քաղաքական և մշակութային կյանքի իրա-

⁹ Տե՛ս Հ. Ա. Օրբելու արխիվը:

¹⁰ Նույն տեղում:

կան պատկերը, որի մասին շատ սուղ տվյալներ կան պահպանված ժամանակակից հայ պատմիչների մոտ: Պատմական, գրական, հնագիտական և բանահյուսական համապատասխան նյութերի դուգադիր խորագնին վերլուծամբ նա ցույց է տվել, թե ինչ փոխհարաբերության մեջ են գտնվել միջնադարյան Հայաստանում տարբեր դասակարգերն ու ազգերը, ինչ բնույթ են ունեցել այնտեղ դատն ու դատաստանը, ինչ աստիճանի վրա են գտնվել արհեստներն ու արվեստը: Դիտնականը հմտորեն վեր է հանել հասարակական վերնախավերի ներկայացուցիչների և ժողովրդի մարդկանց հայացքները՝ կյանքի, մահվան, բարեկամության, հավատարմության, սիրո, ատելության, պատերազմի, խաղաղության և ուրիշ շատ հարցերի վերաբերյալ, նրբորեն վերլուծել է առականների ժանրային, տիպաբանական և գեղարվեստական առանձնահատկությունները:

Օրբելու տվյալ աշխատությունը մի նոր ու կարևոր ներդրում է ոչ միայն հայագիտության, այլև կովկասագիտության և ընդհանուր արևելագիտության մեջ:

Պակաս արժեքավոր չեն նաև Օրբելու մյուս ձեռագիր աշխատությունները:

4

Ակադեմիկոս Հովսեփ Օրբելին իր ուրույն և պատվավոր տեղն ունի հայագիտության անվանի երախտավորների կաճառում: Այդ տեղը նա նվաճել է հայ մշակույթի տարբեր մարզերում ունեցած իր բազմամյա բեղմնավոր գործունեությամբ:

Մեծատաղանդ գիտնական-կազմակերպչի իր հարուստ փորձով ու անսպառ եռանդով Օրբելին հիմնադրել ու կազմակերպել է հայագիտական մի շարք շախմատներ, հետևել է նրանց անխափան գործունեությանը, զորավիգ կանգնել նրանց առաջ ծառացած լուրջ դժվարությունների ժամանակ:

Փորձառու գիտնական-մանկավարժի իր սրատես հայացքով Օրբելին հայտնաբերել, հոգատարությամբ ուսուցանել ու դաստիարակել է խոստումնալից երիտասարդ հայագետների մի ամբողջ սերունդ:

Հոյակապ գիտնական-հոնտորի իր ներշնչուն ու կենդանի խոսքով Օրբելին, ինչպես Հայաստանում, այնպես էլ նրանից դուրս՝ գիտնականների, ուսանողների, դպրոցականների, բանվորների, գյուղացիների, զինվորների ու նավաստիների շրջանում, տարիներ շարունակ պրոպագանդել է հայ մշակույթի հուշարձանների կուլտուրական խոշոր արժեքն ու նշանակությունը:

Հմուտ հայագետ-բանասերի իր շուրջ 40 անուն մեծարժեք աշխատություններով Օրբելին լուսաբանել է պատմական, աղբյուրագիտական, բանագիտական, բարրառագիտական, արվեստաբանական կարևոր նշանակություն ունեցող բազմաթիվ հարցեր:

Օրբելու հայագիտական լավագույն աշխատությունները՝ նվիրված Անիի ավերակներին, միջնադարյան Հայաստանի առականներին, Աղթամարի վանքին, «Սասունցի 'Դավիթ» էպոսին, Եղիշեի «Վարդանանց պատերազմին», թափանցված են հայրենասեր գիտնականի՝ հարազատ ժողովրդի ու նրա մշակույթի նկատմամբ ունեցած անկաշառ սիրով ու ակնածանքով: Այդ աշխատություններից արտացոլում է հեղինակի լուսավոր միտքն ու վառ անհատականությունը:

Դրանք աչքի են ընկնում գիտնականի ընդգրկումների լայնությամբ ու ինքնատիպ մտածողությամբ: Օրբելու հայագիտական ուսումնասիրությունները հարուստ են կուլտուր-պատմական կարևոր եզրակացություններով և խիզախ հարցադրումներով, որոնցով նոր լույս է սփռվում միջնադարյան Հայաստանի և նրա հարևան երկրների ներքին կյանքի, նյութական ու հոգևոր մշակույթի մի շարք հարցերի վրա:

Իր առաջ քաշած գիտական հարցերը Օրբելին չի շրջափակել միայն ազգային շրջանակներով:

Հայ մշակույթի առավել աչքի ընկնող հուշարձանները նա համարձակորեն դուրս է բերել միջազգային ասպարեզ և դնելով դրանք ուրիշ ժողովուրդների նմանօրինակ հուշարձանների կողքին, բացահայտել է նրանց արժեքն ու նշանակությունը:

Անուրանալի են ակադեմիկոս Օրբելու ծառայությունները հայ մշակույթի ուսումնասիրության ու պրոպագանդման գործում: Այդ ծառայությունների համար երախտագետ հայ ժողովուրդը միշտ խորին ակնածանքով ու հարգանքով կհիշի իր պանծալի զավակի սնունը: